

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՅԱԼԻՆ ՀԱՅ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՔՆԵՐՈՒՄ*

Անահիտ Աթայան

Բանալի բառեր՝ ուսուցում, դաստիարակություն, ազգային հերոս, մանկավարժական – ուսուցողական, այբբենական կարգ, հանելով, արվեստի պատմություն, միջնադարյան բանաստեղծ, լույսի պաշտամունք, լուսավոր տաղանդ, հոգևոր երգեր:

Պատմական փաստերը վկայում են, որ միջնադարում, հատկապես Բագրատումյաց թագավորության շրջանում, մի շադր վայրերում ստեղծվել են դպրոցներ, որտեղ դասավանդում էին հմուտ ուսուցիչներ ու մանկավարժներ: Բնականաբար, խոսք չի կարող լինել «մանկական գրականություն» առարկա հասկացության մասին, սակայն ընթերցանության նյութը էին թե՝ կրոնական և թե՝ գիտական բնույթի երկերը: Դայ երեխաները հայոց լեզվին ծանութանում էին Անամիա Ծիրակացու «Նմտություն» գրքով, իսկ հայ պատմագիրների երկերը պատմության ուսուցման կարևորագույն շտենարաններ էին: Ուսուցման գործընթացին օգնում էին այբբենարանները, որոնց բարոյակրթական, ուսուցողական մանրապատումները նպաստում էին երեխաների թե՝ կրթական, թե՝ ճանաչողական գործունեությանը: Բնականաբար դրանք չին կարող ներդաշնակել երեխաների տարիքային առանձնահատկություններին, սակայն խրատն ու բարոյախոսությունը միշտ էլ օգնում էին երեխաների բազմակողմանի զարգացմանը: Դայ մանկավարժները միշտ էլ ուշադրության կենտրոնում են պահել երեխաների կրթության ու դաստիարակության գործը և փորձել են այս իրականացնել հանելուկների, չափածո որոշ երկերի, մանրապատում ստեղծագործությունների միջոցով: «Պատահական չէ, որ մեծ հայագետ Ս. Արեդյանը Ներսես Ծնորհալու «Խրատ ուսումնականց մանկանց» երկը համարել է մանկավարժական գրվածք, որով թե՝ այրութենմ է սովորեցնում (հաջորդաբար), թե՝ բարոյական խրատներ է տալիս մանուկներին»:

Դայ միջնադարը բնորոշվում է գիտության և մշակույթի աշխարհականացման շարժմամբ: Այդ շարժման առաջամարտիկն էր Ծնորհալին, ում ստեղծագործական կյանքն ու կոչումը ժողովրդի բարօրությանը ծառայելն էր, նիրհած հոգիներն արթացնելը, հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ հոգածությունը: Ենշտ է, մանկական գրականության զարգացմանը, ուսուցման գործընթացին շատ էին օգնում ժողովրդական բանահյուսության տարրեր ժամրերի երկներ, սակայն միջնադարում Ծնորհալու երկերը զարդարեցին մեր դասագրերը հապատությամբ ոգեկոչելով մեր մեծերին՝ Տիգրան Մեծին, Ավարայրի հերոսներին, մեր մշակույթի անցյալի գործիչներին: Իսկ նվիրական հիշատակները դաստիարակիչ դեր խաղացին դպրոցներում, կրթօջախներում մարդու դաստիարակության, մարդանիատի ծևակորման գործում:

Ծնորհալու հավաստմամբ հայ եկեղեցին կարևոր էր խաղում ժողովրդի կյանքում՝ դառնալով ազգապահպանման և ազգահամախմբման կարևոր գործոն: Ահա թե ինչու հենց նրա հոգևոր գործունեությունը կրթական և դաստիարակչական կարևորագույն խթան հանդիսացավ դպրոցական գործի կազմակերպման գործընթացում:

Ծնորհալու խրատական-ուսուցողական երկերը, հանելուկները, պոեմները բեկում առաջացրին հայ գրականության ու արվեստի զարգացման բնագավառում, բնականա-

* Հոդվածն ընդունվել է 07.03.19:

Հոդվածն տպագրության է երաշխավորել խնբագրական խորհրդի անդամ բ.գ.թ., դոցենտ, Ն. Հովհաննիսյանը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

բար նաև հայ դպրոցի պատմության ակունքներում:

Նայ մանկանը դաստիարակող, հայ ժողովրդին ուղղված երկ է Շնորհալու «Թուղթ ընդհանրական», որը կրոնադավանաբանական հարցեր պարզաբանող, կենցաղային, վարդեցողության, հայոց կյանքի տարբեր բնագավառների մասին տեղեկություններ հաղորդող երկ է:

Երեխանների հոգևոր զարգացման համար կարևոր երկեր են Շնորհալու հոգևոր երգերը: Նրա շարականների մասին տեղեկություններ են հաղորդում Կիրակոս Գանձակեցին, Գարիիկ Ավետիքյանը, Ս. Անատոլինին, ովքեր արժեքավոր բացահայումներով վերլուծեցին Շնորհալու երկերը: Պատահական չէ, որ հոգևոր երգերի ժողովածուի՝ «Շարականց»-ի մեջ Շնորհալին ամենաբեղմնավոր ու ամենամեծ հեղինակն է: Շնորհալու շարականներից մանկական գրականության ընթերցանության նյութ են հատկապես ազգային-հայրենասիրական բնույթի շարականները, որոնց նյութն առնված է հայ իրականությունից, աշխարհիկ կյանքից: Քիչենք «Զարթիք փառք իմ», Տրդատ թագավորին, Աշխենին, Խոսրովիդուխսին նվիրված շարականները և «Արևագալի» երգերը:

«Քիչենցուք» և «Զարթիք» երգերը Շնորհալին գրել է Յոռմկլայի բերդի պահապան զինվորների համար, որպեսզի այլազգի «Վայրապատ» երգերի փոխարեն հայ զինվորները հայերեն երգեն: Երկը գրված է անթաքույց սիրով՝ առ հայրենին, ծերմ զգացումներով: Կեսգիշերին, երբ քնած է աշխարհը, Շնորհալին դեռ արդուն է: Նա մտածում է ժողովրդի դրությունը բարեկավելու, նրա հոգևոր մշակույթը պահպանելու մասին: Իսկ արշալույսին նա ձայն է տալիս հայերին՝ «Զարթիք, փառք իմ, զարթիք»:

Փաստերը վկայում են, որ շարականներում մեր ազգային և աշխարհիկ հերոսներին Շնորհալին է առաջին անգամ գովերգել: Յայտնի է, որ Ավարայրի պատերազմը մեր ժողովրդի պատմության փառասիրեղ էջերից է: 5-րդ դարից սկսած մեր ժողովրդուրդը ոգեշնչվել է Վարդանանց հերոսների քաջազդորություններով: Ընթերցանության, պատմության դասաժամերին մեր մանկավարժները երեխաններին են մատուցում Ալիշանի «Պլատուն Ավարայրի», Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» երկերը: Շնորհալին այս պատմական հրողությանը երկու բանաստեղծություն է նվիրել: Նա ոչ միայն գովերգում է Վարդանին, այլ նաև կովի դաշտում ընկած զինվորներին, ովքեր հող հայրենիի համար են պայքարել:

«Նորահրաշ» շարականը երգվել է զորահանդեսներում, ներկայացումների ժամանակ՝ նպաստելով երեխանների ռազմական դաստիարակությանը: Առաջին տունը նվիրված է Վ. Մամիկոնյանին, ով հերոսական մահով թշնամուն վաճառ է հայրենի երկրից՝ կոչվելով «Կարմիր Վարդան»:

Շնորհալին գովերգում է խորեն խորխոռունում՝ բացահայտելով նրա ֆիզիկական ու հոգեկան արժանիքները: Երրորդ տաճ մեջ խոսվում է Արտակի մասին, ով նույնապես ընկալում է քաջի մահով: Երկում փառարանվում են Տաճատ Գնթունին, Գարեգին Սրվանձտյանը, Վահան Գնունին: Բանաստեղծության 10 տների գլխագործերից ստացվում է «Ներսեսի երգը» արտահայտությունը:

Թե՛ Վարդանանց և թե՛ Ղևոնդյանց նվիրված շարականներում Շնորհալին երգում է հանազգային հերոսներին: Յայրենասիրության ու մարդկային վեհագույն գծերի գովը են Շնորհալու շարականներից շատերը: Իսկ նրա հոգևոր շարականների երաժշտությունը գեղագիտական դաստիարակության լավագույն գործոն է: Դրանք խոսում են մարդու զգացական աշխարհի հետ, քանի որ ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը կապված են իրար, իսկ եկեղեցական երաժշտության հիմքը ազգային ժողովրդականն է: Յենց այն հանգամանքը, որ չկա հայկական կրոնական որևէ ծես, որ տեղ չկատարվեն Շնորհալու երգերը, ապացուցում է, որ հոգևոր երգը Շնորհալու շնորհիվ հարատացավ ու նոր, կենաւմակ, ազգային, հայրենասիրական բնույթ ծեռք բնուց:

Շնորհալուց պահպանվել են մանկավարժական-ուսուցչական բնույթի բանաստեղծություններ, որոնք չունեն իրենց նախօրինակը հայ գրականության մեջ: Դրանք գովել են ընթերցողի ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու, նրան կրթելու,

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

բազմապիսի օգտակար գիտելիքներ տալու նպատակով: Խրատական ոտանավորմերից մի քանիսը ունեն կարծ տողեր՝ բաղկացած են 36 հանգավոր տներից, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է հայկական այրութենի հերթական տափա անունով: Իր իսկ հավաստմամբ դա այդպես է արվել, որպեսզի երեխաները կարողանան հեշտությամբ և նյութը մտապահել, և յուրացնել հայոց գրերի հերթակարգը:

Ծնորհալին խորհուրդ է տալիս ուսուցումը սկսել կարծ, պարզ և համառոտ բաներից (պարզից բարդը սկզբունքը), որպեսզի երեխան կարողանա նյութը յուրացնել և արագ մտածել, վերլուծել, քննել:

Փաստերը վկայում են, որ միջնադարյան մանկավարժները կիրառել են կարդալու և գրելու համատեղ ուսուցում: Նրանք օգտագործել են այնպիսի մեթոդներ, որոնք կենդանի ու հետաքրքիր են դարձել ուսուցումը, ստվորողներին նյութը յուրացնել են տվել գիտակցորեն, նրանց մեջ դաստիարակել են ինքնուրույն մտածողություն, ճաշակ, աշխատասիրություն:

Տարեկի, Գլածորի և մյուս բարձրագույն դպրոցներում լայնորեն կիրառվել են կարդալու և գրելու հարցու ուսուցումը: Նրանք օգտագործել են այնպիսի մեթոդներ, որոնք կենդանի ու հետաքրքիր են դարձել ուսուցումը, ստվորողներին նյութը յուրացնել են տվել գիտակցորեն, նրանց մեջ դաստիարակել են ինքնուրույն մտածողություն, ճաշակ, աշխատասիրություն: Սաքայի, Գլածորի և մյուս բարձրագույն դպրոցներում լայնորեն կիրառվել են ուսուցման հարցու ուսուցումը, դասախոսությունը, բանավոր և գրավոր ատենախոսությունը, մեծածայն (խմբովին) կարդալը, կարդացածը պատմելը, գրքի վրա անհատապես աշխատելը, թելադրությունը, արտագրությունը, վարժությունները, կրկնությունները և այլն: Մեծ տեղ է տրվել ստվորողների ինքնուրույն աշխատանքներին, մրցակցությանը, զննականությանը: XIX – XXI-րդ դարերում ուսումնական նպատակներով օգտագործվում էին միջնադարյան հեղինակների, այդ թվում Ծնորհալու դիտական կամաց երկերը: Այդպիսի օրինակների նմուշ էին Ծնորհալու «հրատ ուսումնական մանկանց»-ը և «Այրութենով վարժություններ»-ը, որոնք ընթերցանության նյութ ծառայելով հանդերձ՝ նպատում էին երեխաների բարոյական դաստիարակությանը: Դա ուղղակի գյուտ էր թե՝ իր ժամանակաշրջանի և թե՝ հետագա գրականության համար: Իր մանկավարժական բնույթի երկերում Ծնորհալին օգտակար գիտելիքներ և ուսուցանող խորհուրդներ է տալիս ընթերցողին: Միայն կրոնական հարցերը չեն հեղինակի ուշադրության կենտրոնում, հայոց պատմության հետ կապված խնդիրներն են նաև մտահոգում նրան: Ուսանավորներում հեղինակը հոդորում է պարկեշտ լինել, նախանձ ու ազահ չլինել, որովհետև դրանք են չարիքի աղբյուրը: Լինել կիրթ ու քաղաքավարի, վարքով «քաղցր ու հեզ» և հարգել քաղաքական իշխանությունը: Իշխանություններն էլ իրավունք չունեն անարդար լինելու: Այրբենական հաջորդականությանը գրված սույներում մենք տեսնում ենք մարդու և տիեզերքի կապի, մարդու և բնության, մարդու էռության ու նրա մեղքերի փոխհարաբերության խոհական բացատրությունը: Նարեկացիական մեղքի գիտակցումով և դրանից ծերազատվելու միջոցների մասին է գրում Ծնորհալին՝ փորձելով դաստիարակել մարդուն, գիտակցել տալ նրան իր մեղսագործությունները, ուրախացնել Աստծուն, որ փրկվել է իր հոգին, քանզի Քրիստոսի սիրով է մարդ փորձում հեռու մնալ մեղքերից:

Ուրախացո՞ւ, տէր,

Ոգույս փրկութեամբ,

Ոյր մասն եմ ի սուց: [1]

Մարդ Աստծուց է խնդրում իր կյանքն ու երջանկությունը, որովհետև Աստված մարդասեր ու ողորմած է.

Քեզնից եմ, Տէր, հայում,

Մարդասերից,

Ինձ բժշկություն: [2]

Կամ

Եղիր կյանք՝ մեռյալիս,

Լույս խավարյալիս,

Վերանող ցավերիս:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Զարթնի Ռ, Տեր, օգնելու,
Զարթնեցրու թմրյալներին,
Որ հրեշտակներին նմանվեն:[3]
Խեժդ քաղցրության,
Նոգուս ծարավը հազեցրու,
Ցույց տուր լույսի ճանապարհ:[4]

Յեղինակը բոլոր բնագավառների մասին խոհ ու խորհրդածություն ունի և միշտ էլ փափագում է, որ մարդիկ հեռու մնան չարից ու բարին ցանկանան:

Յետաքրքիր են Ծնորհալու հանելուկները: Կիրակոս Գանձակեցի պատմիչը վկայում է, որ Ծնորհալին իր հանելուկները գրել է կենցաղային-առօրյա ժամանցի համար. «....Զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասսացենք գինարբուս և ի հարսանիս», - գրում է նա:[5]

Յանելուկների մի մասը ճանաչողական նշանակություն ունի: Յեղինակը պատմում է պատմական դեմքերի, կենդանիների, բույսերի, բնական երևոյթների, կենցաղային և արհեստագործական առարկաների մասին: Այստեղ էլ ուսուցման մեջ գործում է պարզից բարդ գնալու սկզբունքը: Բանահյուսական տարրը, ժողովրդախոսակցական լեզուն վկայում են հեղինակի զարգացած աշխարհայացքի մասին.

Եկեղեցին բարձր էր և լայն,
Անսին շինած էր և անգերան,
Կանքեղեքն ի կախ կան անչըւան,
Զահերմ ամձեթ ըգլոյսըն տան: [6]

(Երկինք)

Կամ.

Զարդանք ասեմ քեզ սիրելի,
Կին մի ծընաւ գըռուզ որդի,
Տըղայն ունի ալիք ծերի,
Երբ ծերանա դառնա սեւի: [7]

(Խաղող)

Մի շարք հանելուկներ վերաբերում են մեր պատմության նշանավոր անձանց: Դրանց նպատակն է գիտելիքներ հաղորդել հայոց պատմությունից.

Ինաստուն մի ի յԱթենաց
Օր ի յազգէն Յայոց Սեծաց,
Խոսրովացին ծառ մի ասաց,
Որ չոր թուեաց վարդապետաց: [8]

(Դավիթ Անհաղթ)

Կամ.

Մանուկ մի կայր ի Յայք գովան,
Քան րզ Սամփսոն այլ յաղթական,
Վէմ ի վերոյց մեծ տրամական,
Ի ծովն ընկէց կանգնեաց արձան: [9]

Ծնորհալու «Յիսուս որդի» վիպական ողբերգությունը մարդու հոգերանության բացահայտման մի ինքնատիպ երկ է: Յայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակ է «Վիպասանությունը»: Իսկ «Ողբ Եղեսիո» պոեմը, որը քնարակիկական երկ է, ապագայի հանդեպ ժողովրդի հավատի վկայությունն է:

Երկար ժամանակ այս երկը ընթերցանության նյութը է եղել մանուկների ու պատամիների համար: Եղեսիան անձնավորված է որպես որդեկորուս մի մայր, որ, եղերամայրերով շրջապատված, սգում է իր ողբերգությունը, ցավով ու գորովանքով հիշում իր մեռած զավակներին, անհջում թշնամուն, փայփայում հույսը, երազում երջանկության մասին: Պոեմը նաև քաղաքական դաստիարակության միջոց է: Եղեսիայի կործանման նկարագրությամբ Ծնորհալին անդրադարձել է նաև հայ ժողովրդի ծակատագրի հար-

ՄԵՐԻՀԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՄ ՀՐԱՄԱՆ 2019

ցերին: Ազատ հայրենիքի գաղափարն է երկի հիմքում: Միայն պայքարով ու հաղթանակով է հնարավոր նվաճել ազատությունը:

Ն. Ծնորհալու մանկավարժական-ուսուցողական բնույթի երկերը նպատակ են ունեցել բարձրացնել ընթերցողի ազգային իմքնագիտակցությունը, կրթել նրան, բազմակողմանի գիտելիքների հաղորդել ժողովրդի կյանքի վերաբերյալ: Իսկ այբբենական հաջորդականությամբ գրված երգերը ծառայում են լիարժեք մարդ դաստիարակելու նպատակին: Ծնորհալին սովորողներին հորդորում է. «Միշնա զուտումն», «Մի յուսման լինի տաղտուկ»: Աշխատասիրության, պարկեշտության, համեստության դաստիարակության լավագույն օրինակ է «Խրատ ուսումնականց մանկանց»-ը, որտեղ բարոյական դասերը կրթական ու դաստիարակչական նշանակություն ունեն.

Պէս պատուիր է պարկեշտ լինել,

Մի զորովանքը խըճողել,

Մի զգինի բնավ սիրել

Մի տարածամ թերանդ յածել:[10]

Ծնորհալու ողջ ստեղծագործությունը դարագլուխ է բացում մեր մշակույթի պատմության մեջ: Այն և ճանաչողական է, և ուսուցողական: Իսկ այս արժեքները բխում են նրա ստեղծագործության լուսապաշտությունից: Լուսի պաշտամունքը, փառարանումը տիրական է եղել Հայաստանում դեռ հին դարերում: Լուսը նաև գիտությունն է, մանկավարժությունը, որի մեջ այնքան մնայուն ավանդ է ներդրել միջնադարյան հզոր բանաստեղծ, լուսավոր տաղանդ Ն. Ծնորհալին՝ մեծ մանկավարժն ու դաստիարակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայ դասական քնարերգություն, 1986, էջ 225:
2. Սույն տեղում, էջ 151:
3. Սույն տեղում, էջ 151:
4. Սույն տեղում, էջ 155:
5. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, 1961, էջ 222:
6. Հայ դասական քնարերգություն, 1986, էջ 243:
7. Սույն տեղում, էջ 243:
8. Սույն տեղում, էջ 243:
9. Սույն տեղում, էջ 244:
10. Ս. Լալախանյան, Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր, 1973, էջ 24:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ներսես Ծնորհալին հայ մանկագրության ակունքներում
Անահիտ Աթայան**

«Ծնորհալին հայ մանկագրության ակունքներում» հոդվածում փաստարկվում է, որ նրա ստեղծագործությունը մեծ արժեք ունի հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: Մեծ է նրա վաստակը ոչ միայն միջնադարյան պոեզիայի, այլև մանկական գրականության և մանկավարժության բնագավառում: Նրա հանելուկները, խրատները, հոգևոր երգերը կրթական – դաստիարակչական դեր խաղացին հայ ազգային դպրոցի պատմության մեջ: Ծնորհալու կյանքի նպատակը ժողովրդին ծառայելն էր և երիտասարդ սերնդի ճակատագրի հանդեպ մտահոգությունը:

РЕЗЮМЕ

Нерсес Шнорали у истоков армянской детской литературы
Анаит Атаян

Ключевые слова: обучение, воспитание, национальные герои, педагогический-обучающий, алфавитный порядок, загадки, история культуры, средневековый поэт, поклонение свету, лучезарный талант, духовные песни.

В статье “Шнорали у истоков армянской детской литературы” отмечается, что его творчество имеет огромную ценность в истории армянской педагогической мысли: Велик его вклад не только в развитие средневековой армянской поэзии, но и в детской литературе, а также в педагогической мысли. Его загадки, поучения, духовные песни сыграли обучающе-воспитательную роль в истории армянской национальной школы. Целью жизни Шнорали было служение армянскому народу, забота о судьбе молодого поколения.

SUMMARY

Nerses Shnorhali at the origins of Armenian children's literature
Anahit Atayan

Keywords: teaching, upbringing, national hero, educative upbringing, alphabetical order, a riddle, art history, medieval poet, cult of light, bright talent, spiritual songs.

The article “Shnorhali as one of the Founders of Children’s Literature” particularly highlights his work’s significance in the history of the Armenian pedagogical thought. He had a great contribution not only to the medieval poetry but also to such spheres as children’s literature and pedagogy. His riddles, preachments, spiritual songs had an educative and upbringing role in the Armenian national school history. The aim of Shnorhali’s life was to serve his people and care for the future of the Armenian youth.